ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«25» 06 2024թ.

№ ԴԱՆՆ-ԳԿՎ-984

«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ -ին
ՀՎՀՀ 01569235
ՀՀ, ք. Երևան, Զավարյան 57/19, շին. 150
հեռ. 055-65-65-56
էլ. հասցեն՝ karlos.baghramyan@gmail.com

ՀՀ պաշտպանության նախարարության և «Շուշան Տեխնիկս» ՍՊ ընկերության միջև 11.04.2024թ. կնքված N ԳՀԾՁԲ-24-8/9-1 ծածկագրով ծառայության մատուցման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Շուշան Տեխնիկս» ՍՊ ընկերության կողմից 2024թ. մայիսին պետք է իրականացվեր «Դը նեյշընըլ ինթերեստ» միջազգային ամսագրի 2024 թ. էլ. բաժանորդագրություն ծառայության մատուցում:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում բաժանորդագրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավոր է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով ծառայության մատուցման ժամկետ է սահմանված՝ 2024թ. մայիս:

«Շուշան Տեխնիկս» ՍՊ ընկերությունը 29.04.2024թ.–ին ՀՀ պաշտպանության նախարարություն ներկայացված գրությամբ հրաժարվում է մատուցել N ԳՀԾՁԲ-24-8/9-1 ծածկագրով պայմանագրի 3-րդ չափաբաժնով նախատեսված ծառայությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Շուշան Տեխնիկս» ՍՊ ընկերության կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. հունիսի 25-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը չմատուցված ծառայության մասով:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Տեղեկացնում եմ, որ «Շուշան Տեխնիկս» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 925 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 5.2 կետի համաձայն):

Միաժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 26,500 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 39,750 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ. հուլիսի 4-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 26,500 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 39,750 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «Շուշան Տեխնիկս» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024թ. հուլիսի 4-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2078 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ